Տ. ԵՂԻՇԵ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(ավագանի անունը՝ Խաչիկ)

Ծնվել է 1977 թ. մարտի 16-ին Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղում:

1984-1994 թթ. սովորել է Արմավիրի մարզի Այգեկ գյուղի միջնակարգ դպրոցում:

1994-1999 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1999-2000 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո աշխատել է նախ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գանձատանը, ապա՝ Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում:

2000-2003 թթ. ծառայել է Գեղարդա վանքում իբրև լուսարար:

2001 թվականից սովորում է Երևանի Պետական Համալսարանի Պատմության ֆակուլտետում:

2001 թվականի դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002 թ. հոկտեմբերի 31-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հովհաննես Երզնկացի-Ծորածորեցի վարդապետ» թեմայով:

2003 թվականի փետրվարի 27-ին՝ Ս. Վարդանանց տոնին, ձեռամբ Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: